№ 201 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25 1900 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25 № 201

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցանկալի բարեփոխութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Բիւլովի ճառը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տպագրութիւն.

ՑԱՆԿԱԼԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆ

Պետական խորհուրդը ներկայումս զբաղված է անասնաբուժութեան գործի բարեկարգութեան հարցով, որ մեծ նշանակութիւն ունի նաև մեր երկրի համար, որի ազգաբնակութեան մի խոշոր մասը զբաղված է անասնապահութեամբ:

Պէտք է նկատել, որ մեր երկրում ոչ մի պաշտօն այնքան օտարոտի չէ թուացել ազգաբնակութեանը, որքան անասնաբոյժի պաշտօնը: Ո՞վ է և ի՞նչ է եղել մինչև այժմ անասնաբոյժը: Դա մի պաշտօնեայ էր, որ ապրում էր գլխաւորապէս նահանգական քաղաքում և երբեմն ճանապարհորդում էր գաւառներում, երբ ընտանի կենդանիների վրա երևում էին վարակիչ հիւանդութիւններ: Անասնաբոյժը այցելում էր հիւանդութեան տեղը, հարց ու փորձ անում հիւանդ կամ սատկած անասունների քանակութեան մասին, մի քանի նկատողութիւն գրում իր յուշատետրում և նորից վերադառնում իր բնակութեան տեղը:

Վերջին երկու տարվայ ընթացքում անասնաբոյժների թիւը բազմացաւ և նրանց կարելի է հանդիպել նաև գաւառական խուլ անկիւններում: Այդ նոր պաշտօնեաները հետեւում են վարակիչ հիւանդութիւնների շարժման աւելի աչալուրջ կերպով և զբաղված են նրանց դէմ մաքառման հարցով: Անասնաբոյժը, գտնելով որ և է տեղում հիւանդացած կենդանի, իսկոյն մորթել է տալիս նրան, որպէս զի միւս առողջ կենդանիները չը վարակվեն հիւանդութիւնից: Կատարելով իր այդ գլխաւոր պարտաւորութիւնը՝ անասնաբոյժը հանգիստ սրտով վերադառնում է իր բնակութեան տեղը:

Այդպիսով անասնաբոյժը ներկայանում էր մեր ազգաբնակութեան առաջ կամ իբր վիճակագրողի դեր կատարող մի գործակալ, կամ կենդանիներ կոտորող մի պաշտօնեայ: Երկու դէպքումն էլ նա հանդիսանում էր իբրև տեղական վարչութեան մի ներկայացուցիչ, այլ ոչ իբրև մի մասնագէտ, իբրև կենդանիների ցաւերը բժշկող և նրանց հիւանդութիւններին դարման անող մի անձն: Նա ցուցակագրել է հիւանդ անասուններին և կամ կոտորել է նրանց և դրանով սահմանափակել է իր գործունէութիւնը:

Մինչդեռ անասնաբոյժը կարող էր, իբրև տեղական գործող և իբրև մասնագէտ, զգալի օգուտներ տալ ազգաբնակութեան իր մասնագիտական խորհուրդներով և նպաստել ամեն կերպ բարձրացնելու տեղական անասնապահութեան վիճակը, օգնելով գիւղատնտեսին բոլոր այն դէպքերում, երբ նա կարօտ է աջակցութեան և ղեկավարութեան:

Պետական խորհրդին ներկայացրած ծրագիրը նպատակ ունի անասնաբուժութեան ամբողջ գործը, որ մինչև այժմ գտնվում էր ներքին գործերի մինիստրութեան մէջ և կրում էր ոստիկանական բնաւորութիւն, յանձնել երկրագործութեան մինիստրութեան և նրան տալ աւելի բժշկական և գիւղատնտեսական բնաւորութիւն: Դա ցանկալի փոփոխութիւն է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Ռուսաստանի արդիւնագործական առաջադիմութիւնը աւելի եւ աւելի զգալի է դառնում: Յայտնի է, որ այդ առաջադիմութիւնը կապված է այսպէս անուանված՝ հովանաւորող քաղաքականութեան հետ. պետութիւնը, արտասահմանի մրցութիւնը վերացնելու համար, բարձր մաքսերով դժուարացնում է արտասահմանեան ապրանքների մուտքը, որպէս զի երկրի ներսում գործարանական ձեռնարկութիւնները աւելանան, բարգաւաճեն առանց արգելքի եւ այդպիսով երկիրը հետզհետէ հասնէ այն դրութեան, երբ նա կարող կը լինի իր սեփական միջոցներով մատակարարել բոլոր հարկաւոր արդիւնագործական արտադրութիւնները: Այս սիստեմը ունի այն յատկութիւնը, որ, հովանաւորելով արդիւնաբերողներին, տալիս է նրանց առաջ գնալու, իրանց գործերը մեծացնելու ամեն յարմարութիւն, մինչդեռ գնողը պարտաւորված է մի ապրանքի համար աւելի թանգ վճարել, քան կարող էր տալ, եթէ մրցութիւնը արտասահմանի եւ տեղական արդիւնագործների մէջ ազատ լինէր: Եւ որովհետեւ թանգ գները թուլացնում են ժողովրդի տնտեսական կարողութիւնը, սպառելով նրա խնայողութիւնները, ուստի հովանաւորող քաղաքականութեան կողմնակիցները մխիթարում են իրանց այն յոյսով թէ երկրի ներսում զարգացող արդիւնաբերական հիմնարկութիւնները, երբ բազմանան եւ սկսեն շատ արտադրել, այն ժամանակ նրանց մէջ կը ծագէ մրցութիւն, որի հետեւանքը կը լինի գների էժանանալը: «Русскія Вѣдомости» լրագիրը մի լուրջ եւ փաստալից առաջնորդողով հերքում է այդպիսի ակնկալութիւններով մխիթարվողների մտքերը: Նա ասում է, թէ արդիւնագործների մրցութիւնը վաղուց արդէն դադարել է յոյս լինելուց, քանի որ արդիւնագործները գիտեն սինդիկատներ կազմել, միութիւններ ստեղծել, որպէս զի մրցութեան ասպարէզ բաց չանեն եւ գները չէժանացնեն: Բերելով փաստեր շաքարի արդիւնագործութեան պատմութիւնից, փաստեր, որոնք ցոյց են տալիս, թէ շաքարագործների մէջ մրցութիւն չառաջացնելու համար ֆինանսների մինիստրութիւնը նոյն իսկ մի շարք միջոցներ է ձեռք առել, լրագիրը ասում է.

Այս փաստերը վկայում են, որ շատ առերեւոյթական են այն հաշիւները թէ ապրանքների գները կէժանանան սաստիկ մրցութեան ազդեցութեան տակ, մի մրցութեան, որ պիտի զարգանայ հովանաւորող ռէժիմի շնորհիւ: Իրապէս բանից այն է դուրս գալիս, որ սպառողները նախ ծանր զոհեր են անում հայրենի արդիւնաբերութիւնը զարգացնելու համար, իսկ յետոյ, երբ այդ զարգացումը կատարված կը լինի, նրանք կարողութիւն չեն ունենայ օգտվելու այդ զարգացման պտուղներից:

Օգուտը չը կայ, իսկ զոհերը, անկասկած, շատ մեծ են: Այսպէս են վկայում եւ պաշտօնական թւանշանները:

Այժմեան ժամանակ ռուսական չիթերը սպառողները իւրաքանչիւր 100 կիլօգրամի համար աւելորդ վճարում են մօտ 60 րուբլի. եւ որովհետեւ Ռուսաստանում սպառվում է 205 հազար տօնն չթեղէն, դուրս է գալիս, որ սպառողները աւելորդ վճարում են տարին մօտ 123 միլիօն րուբլի: Ռուս սպառողին մխիթարում են նրանով, որ այդ ամբողջ գումարը մնում է երկրի մէջ, որովհետեւ նրա մի մասը ստանում են բամբակ ցանողները, միւս մասը—արդիւնագործութեան մասնակցողները, իսկ երրորդ մասը—գանձարանը. բայց դա մի թոյլ մխիթարութիւն է այն մարդու համար, որ, ունենալով շատ համեստ բիւջէտ, ստիպված է լինում ապրանքի համար 40% աւել վճարել,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

XII

Հայկական տպագրութեան գործը Եւրոպայում 1683-ից յետոյ, ինչպէս տեսանք *), ներկայացնում էր այսպիսի դրութիւն. քանդված էր Ոսկանի տպարանը, նրա մնացորդները տեղափոխվել էին Ամստերդամ, ուր դեռ ջանքեր պիտի լինէին՝ պակասութիւններ լրացնելու, խախտված ու քայքայված գործը նորից կենդանացնելու համար. հայերէն գրքեր տպագրվում էին միայն Վենետիկում, Միքայէլ Բարբօնիի մօտ:

1684—1685 թւականներին, երբ ծանր հարւածը հայ տպարանի ճգնաժամ պիտի ստեղծէր, Բարբօնի բաւական եռանդուն հրատարակչական գործիչ է հանդիսանում, լոյս հանելով վեց գիրք: 1685-ից հայերէն բաժին է բացվում եւ մի այլ իտալացու, Մօրետտիի տպարանում, ուր տպվում են երկու գիրք: Իսկ յաջորդ տարին բացվում է Վենետիկում մի նոր տպարան՝ այս անգամ հայերի ձեռքով:

Բացողը մեզ լաւ ծանօթ Թադէոս քահանայ Համազասպեանն էր: Ոսկանին գերեզմանի ափը հասցնող, իսկ նրա ժառանգներին կաթօլիկ հաւատաքննութեան եւ ֆրանսիական դատարանների չէմքերում քաշքշող այդ քահանան վերջը գալիս է Վենետիկ՝ իր սեւ յանցանքները քաւելու: Այդտեղ նա ընկերանում է Ջուղայեցի հարուստ վաճառական Գասպար Սահրատեանի հետ (որ Շէհրիմանեան ընտանիքից էր), բաց է անում նրա ծախսով տպարան, որի համար փորագրել է տալիս գեղեցիկ տառեր: Սահրատեանի ծախսով էլ նա տպագրեց երկու գիրք—«Խորհրդատետր» եւ «Ճաշոց»: Տպարանական տեսակէտից նշանաւոր գործ է «Ճաշոցը», որ վկայում է թէ Սահրատեանի առատաձեռնութեան եւ թէ Համազասպեանի հմտութեան եւ ընտիր ճաշակի մասին:

Հետաքրքրական է, որ երկու գրքերի յիշատակարանների մէջ էլ Համազասպեան իրան ցոյց է տալիս Էջմիածնի հպատակ, մինչդեռ մենք գիտենք թէ ինչ տեսակ մտադրութիւններով էր նա աշխատում փչացնել Ոսկանին, յուսահատեցնել Լեւոնեանին: Իր այս քաջագործութիւնների մասին Թադէոս քահանան, ի հարկէ, կատարեալ լռութիւն է պահպանում. նա միայն զեկուցանում է Եղիազար կաթողիկոսին թէ վառված լինելով գրքեր տպագրելու ցանկութեամբ, Սպահանից գնաց Մարսէլ, տեսաւ Ոսկանի տպարանը քանդված, ուստի եկաւ Վենետիկ, ուր եւ բաց արաւ Սահրատեանի տպարանը, գործի մէջ մտցնելով եւ իր ունեցած դրամը: Սակայն եթէ Համազասպեան սրանից էլ մեծ գործեր կատարած լինէր, նա դարձեալ պիտի մնայ այն տխուր դիրքում, որ պահել է նրա համար մեր տպագրութեան պատմութիւնը. մատնիչի համար ոչ մի թողութիւն չը կայ: Եւ նրա պատմութեան անպատիւ էջը փակելու համար մեզ կը մնայ ասել, որ վերոյիշեալ երկու գրքերի տպագրութիւնից յետոյ անհետանում է Համազասպեանի անունը:

Իսկ Սահրատեանի տպարանը գոյութիւն է պահպանում մի տարի էլ, տպագրում է Յովհաննէս Հոլովի «Խոկումն Քրիստոնէական» անունով թարգմանութիւնը *) եւ դրանով էլ վերջ է դնում իր գործունէութեան: Բայց մի եւ նոյն տարին նոյն Վենետիկում բացվում է հայերէն մի նոր տպարան՝ դարձեալ հայ վաճառականի ձեռքով: Այս անգամ Ջուղան չէ հայ տպագրութեան մեկենասի հայրենիքը, այլ մի ուրիշ, նոյնպէս յայտնի վաճառականական գիւղ—Ագուլիսը: Բայց նախ քան մեկենասի մասին խօսելը, մի քանի տեղեկութիւններ տանք նրա հայրենիքի մասին, որ Հայաստանի հետաքրքրական անկիւններից մէկն է ներկայացնում:

Շատ խոշոր եւ հետաքրքրական է հայ ազգի կուլտուրական պատմութեան այն փաստը, որ Հայաստանում վաճառականութիւնը ամենից շուտ եւ ամենից շատ ծաղկեց Արաքսի ափերի վրա: Հայկական այս մեծ գետը միջազգային առեւտրական մի ճանապարհ էր շատ հին ժամանակներից: Յայտնի է, որ Քրիստոսից չորս դար առաջ Յունաստանը առեւտրական յարաբերութիւններ սկսեց Հնդկաստանի եւ Միջին Ասիայի հետ, Անդրկովկասի վրայով: Սեւ ծովից երկու ճանապարհ կար դէպի Կասպից ծովը. մէկը Րիօն եւ Կուր գետերից էր կազմվում, միւսը Ճորոխ եւ Արաքս գետերից: Այդ ճանապարհների վրա հիմնվեցին բազմաթիւ յունական գաղութներ, որոնք հնդկա-եւրոպական առեւտրի պահականոցներն էին. այդտեղ էլ զարգացան տեղական խոշոր առեւտրական կենտրոններ: Այսպէս Արաքսի վրա միմեանց յաջորդած հայոց մայրաքաղաքները—Արմաւիր, Արտաշատ, Դուին յայտնի էին եւ իբրեւ շուկաներ, ուր փոխանակվում էին Արեւմուտքի եւ Արեւելքի ապրանքները: Արաքսը այդ քաղաքների համար նաւամատոյցի դեր էր կատարում: Բայց քաղաքական անցքերը, դարերի ընթացքում յեղափոխելով ազգերի ճակատագիրը, անհետացրին Անդրկովկասեան առեւտրական գաղութները, խլացրին եւ ամայի դարձրին Հնդկաստանի այդ մեծ ճանապարհները: Արաքսի հովիտը ենթարկվելով բարբարոսական արշաւանքների, կորցրեց իր առեւտրական առաջնակարգ նշանակութիւնը եւ երկար ժամանակ այնտեղ չէին երեւում ոչ առանձնապէս աչքի ընկնող վաճառանոցներ, ոչ էլ վաճառականների նշանաւոր դասակարգ:

Սակայն XVI դարից յանկարծ վերակենդանացած ենք տեսնում հին առեւտրականութիւնը դարձեալ Արաքսի հովտում, բայց այս անգամ նրա այն մասում, որ Սիւնիքի սահմանագլուխն է կազմում: Կարծես դարերի մոխրի տակից նոր նոր դուրս են գալիս հին վաճառականական գաղութները: Ի՞նչ էին դրանք անյայտութեան այնքան երկար շրջանում—մենք չը գիտենք: Տեսնում ենք միայն, որ տեղացի հողագործ ազգաբնակութեան մէջ կղզիացած եւ շրջապատող ժողովրդին բոլորովին չը նմանվող, կարծես մի ուրիշ ցեղ, ուրիշ ծագում ներկայացնող գիւղաքաղաքներ կան, որոնց բնակիչները առեւտրականներ են, այն էլ հեռաւոր աշխարհներում գործող, զարմանալի ճարպիկութիւն եւ փորձառութիւն ձեռք բերած առեւտրականներ: Այդպիսի տեղերից մէկը արդէն լաւ ծանօթ է մեզ—հռչակաւոր եւ իր նմանը չունեցած Ջուղան: Նրանից յետոյ գալիս է նրա հարեւան Գողթան լեռնոտ գաւառի կենտրոն Ագուլիսը, իսկ երրորդ, գուցէ եւ աւելի աննշան տեղը բռնում է Մեղրի գիւղը:

Ագուլիսը չենթարկվեց Ջուղայի բախտին, նա մնաց իր տեղը: Բայց դա չէ նշանակում թէ իբրեւ համաշխարհային վաճառականների հայրենիք՝ Ագուլիսը այնքան աննշան էր, որ չէր կարող գրգռել Շահ-Աբասի նախանձը: Դեռ Շահ-Աբասից առաջ Ագուլիսը, իբրեւ վաճառականական գիւղաքաղաք, արտօնութիւններ էր վայելում պարսից կառավարութիւնից: Այսպէս, XVI դարում նա «խասս» էր, այսինքն համարվում էր Իրանի Շահերի սեփականութիւն եւ հարկ էր տալիս անմիջապէս պարսից արքունիքին *): Այդ դրութիւնը շարունակվեց եւ Շահ-Աբասի ժառանգների ժամանակ:

Իբրեւ վաճառական՝ ագուլեցին կամ զօկը, ինչպէս սովորաբար անուանում են նրան, ջուղայեցու չափ խիզախ ու ձեռնարկող ոգի ունէր, նոյնպէս արհամարհում էր աշխարհագրական տարածութիւնները, նոյնպէս երեւում էր բոլոր յայտնի վաճառանոցներում: XVII դարի ագուլեցի վաճառականներից մէկը, ոմն Զաքարիա, թողել է մի շատ հետաքրքրական օրագրութիւն կամ, ինչպէս ինքն է ասում, «դավթար» **), որից կարելի է շատ տեղեկութիւն-

---

*) Գլ. VIII.

*) Այս գիրքն էր, որ Մխիթար Սեբաստացուն առաջին անգամ ծանօթացրեց կաթօլիկ դաւանութեան հետ: Լուսաւորչական կղերը մանաւանդ «Խոկումն Քրիստոնէականն»-ի դէմ էր կատաղած և հալածում էր նրան, այրել էր տալիս:

*) Հ. Ալիշան—«Սիսական», եր. 330:

**) Այդ «դավթարի» մէջ Զաքարիան արձանագրել է այն ամենը, ինչ հետաքրքրական է համարել. այդտեղ են թէ նրա առեւտրական հաշիւները, թէ առօրեայ մանր դէպքերը, թէ ժամանակակից պատմական անցքան ինչ նա պիտի վճարէր, եթէ չը լինէին հովանաւորող մաքսահարկերը: Այսպէս են ռուս սպառողի առձեռն զոհերը, իսկ օգուտները, որ Նրան խոստանում են, շատ հեռաւոր եւ առերեւոյթական են:

Յարգելի լրագիրը իր այս տեսութիւնը լուսաբանում է միայն այն գումարով, որ աւելորդ տեղից տալիս է ազգաբնակութիւնը չթեղէն ապրանքների համար: Բայց արդիւնագործութիւնը ունի բազմաթիւ ճիւղեր, որոնցից իւրաքանչիւրը հովանաւորող սիստեմի շնորհիւ պահանջում է զոհեր սպառողից: Քանի՜ հարիւր միլիոններ կը կազմվէին, եթէ մենք գումարէինք այդ բոլոր ճիւղերի պահանջած զոհերը: Վաղուց ասացուածքի ձեւ է ընդունել, որ ռուսաց շաքարով Անգլիայում խոզեր են կերակրում, մինչդեռ մեզանում ամեն մէկը չէ կարող ամեն օր շաքար ունենալ իր գործածութեան համար: Վերցնենք հէնց նոյն իսկ Բագուի Նաւթը: Ասում են, Նաւթը Լոնդոնում աւելի էժան է քան նոյն իսկ Թիֆլիսում: Իսկ Ռուսաստանի շատ կողմերում Նաւթը այնքան հազուագիւտ ու անմատչելի բան է, որ դեռ հնադարեան մարխն է (лучина) վառվում խրճիթների մէջ: Սպառողը շատ ու շատ զոհեր տուել է, Բագուի արդիւնագործութիւնը հսկայական չափերի է հասել, բայց Նաւթի էժանութիւն չը կայ եւ չը պիտի էլ լինի, քանի որ Նաւթային թագաւորները գիտեն ամեն անգամ, երբ հարկաւոր է, սինդիկատներ կազմել եւ սպառողին պլոկել առաջվայ նման: Դրութիւնը շաղ-շաղ միլիոնատէրեր է ստեղծում, որոնք լուկուլլական ճաշերով պարարտացնում են իրանց անձը. իսկ սպառողին թողնված է մի հաճոյք—այն, որ կան եւ ապրում են միլիոնատէրեր...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ղարայազի ռուս գաղթականների գիւղում՝ նոյեմբերի 21-ին, Թիֆլիսից գնացած աստիճանաւորների եւ ռուս գաղթականներին Նպաստող Անդրկովկասեան ընկերութեան անդամների Ներկայութեամբ, կատարվեց տարրական դպրոցի բացման հանդէսը: Այս առիթով՝ ռուս գաղթականներին Նպաստող ընկերութեան Նախագահ Բուտիրկին մի հեռագիր ուղարկեց Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչին, որից ստացվեց հետեւեալ հեռագրական պատասխանը. «Թիֆլիս, գաղտնի խորհրդական Բուտիրկինին: Շատ շնորհակալ եմ երէկվայ հեռագրի համար. ուրախ եմ, որ սկիզբն է դըրված մի բարի գործի, բայց սաստիկ երկիւղ եմ կրում, որ ռուս գաղթականները Ղարայազում աւելի եւս կը նեղվեն տենդից, քան տեղացիները»:

—

Ստացանք «Հաշիւ Թիֆլիսի Տափի Թաղի (Քամոյենց) ս. Գէորգ եկեղեցոյ, երէցփոխ Կ. Ս. Ջալալեանի օրերով, սկսեալ 1895 թ. յունիս 1—1899 թ. դեկտեմբերի 16-ին»: Չորս ու կէս տարվայ այս հաշիւը կազմել եւ հրատարակել է եկեղեցու այժմեան երէցփոխ պ. Առ. Վարդապետեան եւ Նա շատ պերճախօս է: Դրանից մենք իմանում ենք, որ Նախկին երէցփոխ Ջալալեանի մօտ մնում է եկեղեցապատկան 8504 րուբլի 23 կոպէկ եւ այդ պակասորդի մի մասը գոյացել է Նրանից, որ տարիների ընթացքում մուտք չեն գրվել եկեղեցու մի քանի եկամուտները: Այսպէս «°|₀°/₀ օբլիգացիաների երկրորդ փոխառութեան պիտի լինի 4126 ր. 50 կոպ., մտցրած է մատեաններում 3546 րուբլի 85 կոպ., զանազանութիւնը՝ 579 ր. 65 կոպէկ», կամ թէ «մոմից մուտք պիտի լինէր 3155 րուբլի 35 կոպէկ, մտցրած է մատեաններում միայն 2695 ր. 80 կոպ., զանազանութիւնը 459 ր. 55 կոպէկ»: Հաշւից երեւում է նոյնպէս, որ 174 մկրտութիւնից ստացվել է ընդամենը 5 ր. 30 կոպէկ: Շատ ուրախ կը լինէինք, եթէ այդքան անարծաթսիրութիւնը իսկապէս գոյութիւն ունենար մեր եկեղեցական պաշտօնեաների մէջ. բայց կասկածելի է, որ դա իրողութիւն լինէր: Մեր երէցփոխները կանոնաւոր հաշւետուութեան մտքին չը սովորեցին այսքան տարի: Տարօրինակ է թըւում թէ ինչու պ. Ջալալեանի 4½ տարվայ հաշիւները պիտի տայ Նրա յաջորդ պ. Վարդապետեանը: Միթէ այնքան դժուար էր ամեն տարի մանրամասն հաշիւ տալ: Մենք հաւատացած ենք, որ կանոնաւոր եւ խիստ հաշւետուութիւնը այն օգուտը կունենար պ. Ջալալեանի համար, որ չէր գոյանայ 8504 րուբլու պակասը, որ պ. Ջալալեան բացատրում է «Մշակի» երէկվայ համարում իր «անփորձ լինելովը»: Մենք ամենեւին չենք կասկածում, որ երէցփոխը կարող է անփորձ լինել, բայց կարծում ենք, որ եթէ ամեն տարի հաշիւ Ներկայացնվէր, այդ անփորձութիւնը ժամանակին կը Նկատվէր եւ պ. Ջալալեանց այժմ անախորժ դրութեան մէջ չէր լինի:

—

Կիրակի, նոյեմբերի 22-ին, Աւճալեան ժողովրդական ընթերցանութեան դահլիճում կայացաւ «Հանրամատչելի ներկայացումների» հինգերորդ ներկայացումը: (Ձմեռային սեզոն): Այս անգամ խաղում էին հանգուցեալ Թուբեանի իտալերէնից թարգմանած «Դօն-Գրիգորիօ» կոմեդիան: Խաղը՝ շնորհիւ բոլորովին անփորձ սիրողների՝ անցաւ բաւական թոյլ, բացառութեամբ օր. Վարսենիկի եւ պ. Ս. Աբրահամեանի՝ որ Դօն-Գրիգորիօյի դերը կատարեց բաւարար կերպով, իսկ մնացեալները բոլորովին «խամ» լինելով չը կարողացան տանել իրանց դերերը: Թատրոնը մշտապէս ծայրէ ի ծայր լի է լինում հանդիսականներով: Դա ուրախալի երեւոյթ է: Ինչպէս լսում ենք, առաջիկայ կիրակի խաղալու են Օստրովսկու «Անմեղ մեղաւորները»:

—

Նոյեմբերի 22-ին, երեկոյեան, Ալէքսանդր Բաքրաձէ, անտառային ռեվիզորը Կովկասում, յանկարծամահ եղաւ սրտի պայթիւնից: Նա կատարելապէս առողջ էր եւ վերադառնում էր Մցխէթից Թիֆլիս երկաթուղու II կլասի վագոնով: Վագոնը լիքն էր հասարակութեամբ եւ շոգ էր. յանկարծ Բաքրաձէ իրան վատ զգաց եւ մի քանի րոպէից յետոյ հոգին աւանդեց: Բաքրաձէ 50 տարեկան մարդ էր:

—

Պետերբուրգում հիմնվում է մի ընկերութիւն, որի Նպատակը կը լինի մշակել Ռուսաստանում ապրող այլազգիներին վերաբերեալ հարցերը: Այդ ընկերութիւնը կանուանվի «Սոլովիէվսկի կրուժօկ» ի յիշատակ հանգուցեալ Վ. Ս. Սոլովիէվի: Այդ ընկերութեան կանոնադրութիւնը քննված է եւ շուտով կը Ներկայացվի հաստատութեան:

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ կազմված էր մի յանձնաժողով, որի Նպատակն էր վերաքննել գերմանական եւ օտար ազգութիւնների ուսումնարանների մասին Ներկայումս գոյութիւն ունեցող օրէնքները: Այժմ—ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները—այդ յանձնաժողովը վերջացնելով իր զբաղմունքները՝ եկել է այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է վերակազմել գերմանական եկեղեցական-ծխական դպրոցները եւ մօտեցնել Նրանց ռուսաց ժողովրդական դպրոցների տիպին: Ենթադրվում է նոյնպէս այսպէս անուանված գերմանական կենտրոնական դպրոցներում այնքան ընդարձակել ուսման ծրագիրը, որ Նրանց մէջ աւարտող աշակերտներին կարելի լինի տալ ուսուցչութեան արտօնութիւն:

—

ԹԱԽՏԱԲԱԶԱՐԻՑ (Անդրկասպեան երկիր) մեզ գրում են. «Նոյեմբերի 5-ին Անդրկասպեան երկրի կառավարիչ գեներալ Բօգոլիւբօվ Ասխաբադից գնացել էր Կուշկա. այնտեղից վերադառնալիս մի օր մնաց Դաշքօրփի մի քանի ինժեներներով, որպէս զի երկաթուղու ճիւղը սկսվելու տեղը ցոյց տայ: Դրանից մի քանի օր առաջ մենք լսել էինք, որ Դաշքօրփից մինչեւ Թախտաբազար ուզում են երկաթուղի տանել: Այսօր ճշտվեց այս լուրը: Այստեղի համար շատ ցանկալի են համարում տրանզիտ սարքել, բայց այդ բանը անհնարին է համարվում, քանի որ Քաբուլում հիւպատոս չը կայ: Եթէ այս կողմերի եւ Աւղանիստանի մէջ առեւտրական փոխադարձ յարաբերութիւններ սկսվեն, այն ժամանակ մեծ բախտ է սպասում առեւտրականներին, որովհետեւ մեծ քանակութեամբ ապրանք կը ծախվի Աւղանիստանում եւ թէ մեծ ապրանք կը մտնէ ռուսաց հողը: Այստեղի առեւտրականները կենդանի են միմիայն աւղանցիներով. եթէ բանը մնայ թուրքմեններին, այն ժամանակ ոչ մի առեւտրական չէր մնայ այստեղ, բացի հրէաներից, որոնք չարչիութեամբ են պարապվում, եւ մասամբ էլ կօմիսիօններ են, սրա նրա համար մորթի, բուրդ են առնում: Միայն երկու հրէաներ կան, որոնք հեյրաթցի են, լաւ առեւտուր են անում եւ լաւ օգուտներ տեսնում. պատճառը՝ Հէյրաթի հետ յարաբերութիւններ ունեն»:

—

Գանձակի գաւառի **ԲԱՆԱՆՑ** գիւղից մեզ հաղորդում են. «Մեր գիւղացի Կարապետ անունով մէկը Բանանցից մօտաւորապէս երկու վերստ հեռու գտնվող Խաչի-հող կոչված տեղը գութանի մօտ է լինում: Իրիկնադէմին ձիով տուն վերադառնալիս մտնում է անտառը փայտ տանելու: Հէնց այն րոպէներին պահ մտած անյայտ չարագործները երկու գնդակի հարուածով վերջ են դնում թշուառի կեանքին եւ, դիակը մի տեղ դնելուց յետոյ, ձին առնում անյայտանում են: Տանեցիք կարծում են, թէ Կ. գութանի մօտ է, իսկ գութանաւորները կարծում են թէ տանը կը լինի: Միայն անցքից երեք օր յետոյ Նոյն անտառում զկեռ քաղող աղջիկների խումբը, հանդիպելով Կ.-ի դիակին, ահ ու սարսափով եկաւ, գուժեց այդ տխուր լուրը: Իսկոյն մարդիկ վազեցին, լաց ու կոծով գիւղ բերին գնդակահար դիակը: Մենք բոլորովին զարմանում ենք այս ցաւալի դէպքի վրա: 50 տարիքը անցրած մի թշուառ, բազմանդամ ընտանիքի տէր մարդ, իր ամբողջ կեանքում երբէք մէկին չէր անգամ վր-

---

ներ հանել զօկերի վաճառականութեան մասին: Այդտեղից մենք իմանում ենք, որ առեւտրական գործերը տանում էին ագուլեցուն Սպահան, Թավրիզ, Թիֆլիս, Զմիւռնիա, Բրուսա, Կ. Պօլիս, Լիվօրնօ, Վենետիկ, Ամստերդամ. իր ճանապարհորդութիւնների ժամանակ նա լինում էր Ֆրանսիայի, Սպանիայի, Պորտուգալիայի, Իտալիայի ծովափեայ քաղաքներում, մի խօսքով ծանօթ էր Եւրոպայի մի Նշանաւոր մասի հետ:

Ջուղայի անհետանալուց յետոյ Ագուլիսին էր մնում կուլտուրական դեր կատարել արեւելեան Հայաստանում, որովհետեւ դա էր ամենից Նշանաւոր տեղը, որի բնակիչները շփվում էին քաղաքակրթված աշխարհի հետ եւ տուն էին բերում թէ հարստութիւն եւ թէ հասկացողութիւններ եւրոպական կեանքի ու առաջադիմութեան մասին: Որ Ագուլիսը այդպիսի դեր կատարել է, դա անուրանալի է: Հարց կարող է լինել միայն չափի մասին. եւ եթէ հարկաւոր լինի համեմատութիւն դնել Ջուղայեցու եւ զօկի մէջ, մենք կը տեսնենք, որ վերջինս առաջինի կօշիկներն անգամ վերցնելու արժանի չէ: Ջուղայեցին կարողացաւ վաճառականական ոգու հետ միացնել աւելի բարձր, մտաւոր շահերի, համայնականութեան հասկացողութիւնը, մինչդեռ ագուլեցին մնաց մեծ մասամբ գծծի, եսամոլ վաճառական, որի համար ամենից առաջ եւ ամենից բարձր սեփական շահերն են *): Այս վատ յատկութիւնը Ագուլիսը ցոյց տուեց մի խայտառակ փաստով. XVIII դարի առաջին կէսում, ինչպէս կը տեսնենք իր տեղում, Ագուլիսը իր վաճառականական բարեկեցութիւնը չը վտանգելու համար, Նոյն իսկ թշնամական գործողութիւններ սկսեց Դաւիթ-բէկի դէմ, երբ սա իր հռչակաւոր ազատական պատերազմների մի մասը փոխադրեց Գողթան գաւառը. եւ ո՜վ գիտէ, գուցէ Դաւիթ-բէկի մահից յետոյ ազատութեան գործը այնպէս շուտ չը խորտակվէր, եթէ ագուլեցիները դաւաճանութեամբ սպանած չը լինէին այդ գործի քաջ եւ հեղինակաւոր ախոյեաններից մէկին, Մելիք-Փարսադանին...

Բայց եւ այդպէս, չէ կարելի ասել թէ ընդունակ եւ հարուստ ագուլեցու դերը միշտ բացասական էր հանրային տեսակէտից: Եթէ ինքը, ագուլեցին, անձամբ շատ քիչ էր հանրաշահ գործերի հեղինակ հանդիսանում, շատ քիչ էր իր դրամն ու եռանդը Նուիրում այդպիսի գործերին, այնու ամենայնիւ, Նա, իբրեւ աշխարհ տեսած, զարգացած մարդ, ազդեցութիւն ունէր շրջապատող ազգաբնակութեան վրա: Անշուշտ այդ ազդեցութեան շնորհիւ էր, որ հարեւան Ղափանը, չը Նայած իր լեռնոտ եւ անմատչելի դիրքին, նոյնպէս վաճառականներ ուղարկեց Վենետիկ եւ Արեւմուտքի ուրիշ կողմերը. այդ վաճառականներից մէկի ընտանիքում էլ ծագեց Դաւիթ-բէկի պատերազմների միտքը *): Ազդեցութեան Նշանակութիւնը ցոյց տալու համար վերցնենք Նաեւ հայկական տպագրութիւնը: Այս գործը, ինչպէս գիտենք, գլխաւորապէս հայ վաճառականների օժանդակութեամբ էր պահվում Եւրոպայի մէջ: Ագուլեցիները շատ աննշան մաս ունէին այդ օժանդակութեան մէջ. Ոսկան վարդապետին օգնողների մէջ մի հատ ագուլեցի ենք տեսնում, իսկ մի ուրիշ ագուլեցի, Ոսկան Մարտիրոսեան անունով, 1685 թւին Վենետիկի Բարբոնիի տպարանում հրատարակեց մի Աւետարան: Բայց այդքանով չը պիտի մենք դատենք ագուլեցիների արածների մասին: Մեր գործի սկզբում մենք ասացինք, որ հայ վաճառականի ետեւից Եւրոպա էր գնում հայ գրագէտը, սովորելու եւ սովորեցնելու տենչով վառված հայ մարդը: Ագուլիսը այդպիսի ուղեցոյց եղաւ իր մօտ գտնվող Վանանդ գիւղի համար, որտեղից դուրս եկան երեք Նշանաւոր տպագրական գործիչներ, որոնք Ամստերդամում գեղեցիկ գործեր կատարեցին:

Բուն ագուլեցի վաճառականներից հայկական տպագրութեան մեկենաս հանդիսացաւ Խօջա-Նահապետ Գիւլնազարեանը: Դա էր, որ, ինչպէս ասացինք, Սահրատեանի տպարանի փակված տարին, 1687-ին, բաց արեց նոր տպարան իր սեփական տան մէջ: Գիւլնազարեան բաւական Նշանաւոր վաճառական էր եւ գործեր ունէր Զմիւռնիայի, Կ. Պօլսի, Հոլլանդիայի, Լիվօրնօի մէջ: Ինչպէս երեւում է, մի մարդ էր դա, որին ամբողջապէս չէին կլանել առեւտրական հաշիւները եւ որ շատ ժամանակ էր գտնում մտածելու իր ազգակիցների մտաւոր շահերի մասին: Ագուլեցի խօջան իր տպարանով մի արտակարգ եւ երկարատեւ գրական ծառայութիւն չը մատուցեց ազգին, բայց այնքանն էլ բաւական է, որ Նա աշխարհական ընթերցողների դասի պաշտպան հանդիսացաւ եւ կարողացաւ մի աշխարհաբար գրքի հրատարակութեան պատճառ դառնալ: Այդ գիրքը «Պարզաբանութիւն Սաղմոսացն»-ն է, Նրա տպարանի միակ հրատարակութիւնը:

Ապրելով իտալացիների մէջ, Նա տեսել էր, որ գոյութիւն ունեն ժողովրդական հանրամատչելի լեզուով գրված գրքեր եւ ամեն մէկը, վաճառական թէ արհեստաւոր, կարող է իր կարդացածը հեշտ հասկանալ. մինչդեռ հայերի մէջ գրքերը միմիայն այն դասակարգի համար են, որ գիտէ գրաբար, այսինքն եկեղեցականների համար: Դա մեծ զրկանք էր հայ հասարակ ժողովրդի համար, որ այդպիսով հեռու էր քշված գրականութիւնից: Հոգեւորականութիւնը չէր Նկատում այդ, կամ եթէ Նկատում էլ էր, այնքան անպատրաստ ու պահպանողական էր, որ ոչինչ չէր կարողանում կամ չէր ուզում անել: Խօջա-Նահապետը իր բնատուր խելքով հասկացաւ ժողովրդական պահանջը եւ աշխատեց Նրան բաւարարութիւն տալու փորձն անել: Նա ուզում էր Սաղմոսի աշխարհաբար բացատրութիւնը պատրաստել տալ ժողովրդի համար եւ երբ առեւտրական գործերով գնաց Կ. Պօլիս, այնտեղ որոնում էր մի մարդ, որ կարողանար իր այդ փափագը կատարել: Բայց իզուր էին այդ որոնումները: Վերադառնալով Վենետիկ, Գիւլնազարեանց այդտեղ գտաւ Յովհաննէս Հոլովին, որ յանձն առաւ եւ կատարեց այդ գործը լատիներէնի եւ յունարէնի օգնութեամբ:

Աշխարհաբար գիրք հրատարակելը այնքան անօրինակ եւ անհասկանալի բան էր, որ Հոլովը առաջաբանի մէջ պարտք համարեց բացատրութիւններ տալ, մեղադրանքներից արդարանալու համար: Կաթոլիկ վարդապետը շտապում է յայտնել թէ իր աշխատութիւնը եկեղեցականների համար չէ, որոնք լաւ գիտեն գրաբարը եւ կարող են ճաշակել գրքերի քաղցրութիւնը, այլ աշխարհականների համար է, որոնք, զբաղված լինելով աշխարհային գործերով եւ չիմանալով գրաբարը, միանգամայն զրկված են գրքերից: Թէեւ այսպէս, բայց Հոլովը գիտէր, որ ամեն մէկը, բաց անելով իր գիրքը եւ տեսնելով Նրա մէջ աշխարհաբար, պիտի ասէ թէ Նա հայերէն չը գիտէ: Այսպէս էր ժամանակը. հայերէն գիտցողը Նա էր միայն, որ կարող էր հասկանալ եւ գործածել թանձր գրաբարը: Ուստի վարդապետը, այդ վիրաւորական կարծիքը ջրելու համար խնդրում է, որ չը կարծեն թէ ինքը չը գիտէ հայերէն լեզուն: Ո՛չ, Նա շատ լաւ գիտէ այդ լեզուն, բայց գործ է ածում աշխարհաբարը հարկից ստիպված, ակամայ, ժողովրդին բան հասկացնելու համար:

(Կը շարունակվի)

քերը: Շատ են այնպիսի մանրամասնութիւններ, որոնց մէջ երեւան է գալիս հայ վաճառականը իր գործերով, իր ընտանեկան հանգամանքներով, տան սարք ու կարգով: Հեղինակը չէ մոռացել արձանագրել Նոյն իսկ թէ ինչպէս ինքը բաժանվեց իր եղբօր որդիներից եւ ինչ շարժական եւ անշարժ կայք ստացաւ ամեն մէկը, թւում է պղնձի ու արծաթէ ամանները, Նրանց արժողութիւնը: Գրուածքը գրական արժանաւորութիւններ չունի. դա գրագէտ վաճառականի մի վայրիվերոյ, տեղ տեղ կրկնութիւններով մթնացրած շարադրութիւն է: Կայ այն Նշանաւոր հանգամանքը, որ գրուածքը աշխարհաբար լեզուով է եւ կարող է համարվել իբրեւ Նմուշ այն աշխարհաբարի, որ գործ էին ածում հայերը այն ժամանակներում:—Զաքարիայի այս գրուածքը արդէն տպագրել է տուել «Մշակի» խմբագիր պ. Ա. Քալանթար, որը եւ շուտով լոյս կը հանէ Նրան:

*) Ս. Սարգսեան—«Ագուլեցոց բարբառը», Մօսկվա, 1883, եր. 12:

*) Ստեփաննոս Շահումեանն էր Դաւիթ-բէկի պատերազմների սկզբնապատճառը. իսկ Նա պատկանում էր այն ընտանիքին, որ XVII դարի կէսից առեւտրական տուն ունէր Վենետիկում:

նաս չը տուած՝ որ ցերեկով փայտ կըտրելիս գնդակահարվում է։ Մենք կասկածում ենք մեր դրացի աւազակաբարոյ Թուրքերին, որոնք արագաձիգ հրացաններով զինված լինելով՝ երկիւղ չեն կրում ոչ ոքից։ Դէպքից 3—4 օր առաջ նոյն անտառում աղջիկները տեսել էին երեք զինված Թուրքերի, իսկ մի քանի օր առաջ Խաչի-հողում գիշերը հոտաղները եզները արածացնելիս, աւազակները գալիս քշում են լծկաններին, միայն հոտաղների օգնութեան կանչող բարակ ու զիլ ձայնի վրա գիւղից գնացող երիտասարդները կարողացել էին աւարը թողնել տալ։ Խեղճ է մեր բանանցեցին. սպանվում է Թուրքից լոյս օրին սարում, իր հանդը պահելիս. գնդակահար են անում նրան գիւղի մէջ խանութը թալանելիս, գնդակահար է լինում գիւղից ոչ հեռու Գանձակ տանող ճանապարհի վրա ցերեկով սպանվում, մարմնի վրա 40-ից աւելի վէրք է ստանում այգու մէջ. դարձեալ սպանվում է ցերեկով գիւղի առաջին մի բեռը փայտ տանելիս։ Եւ այս բոլորը կատարվում է մէկ տարվայ ընթացքում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՐԻԽՏԷՐԻ ՃԱՌԸ

Գերմանայի յայտնի հռետոր Րիխտէր նորերս ազատամիտ կուսակցութեան ժողովում արտասանեց մի նշանաւոր ճառ, որ նոյն իսկ նրա հայեացքների հակառակորդ մամուլը գետեղում է ամբողջապէս։

Մենք վերցնում ենք այդ ճառի բովանդակութիւնը «Русс. Вѣд.» լրագրի Բերլինի թղթակցութիւնից։

Րիխտէր սկսեց ճառը ասելով, որ ներկայ կուսակցական ժողովը զուգադիպեց գերմանական կանցլէրի փոփոխութեան հետ, որի մէջ սակայն անմեղ են թէ ինքը՝ ճառախօսը, թէ իր կուսակցութիւնը (Ծիծաղ)։ Մեզ երբեմն կասկածում են,—յայտնում է հռետորը անմեղ եղանակով,—մինիստրներ գահավիժելու փորձերում, բայց բարի ծերունի Հօհէնլօէին մենք հանգիստ էինք թողնում։ Քիչ լաւ բան արեց նա, բայց եւ քիչ վատ բան։ Նրա դրութեան մէջ վատ էր միայն այն, որ կանցլէրի պաշտօնը առհասարակ վերածվել էր կատարողական դերի, ուստի եւ մեր վերաբերմունքը դէպի Հօհէնլօէի յաջորդը ամենից առաջ կախված կը լինի նրանից, կը ցանկանայ արդեօք նա եւ կը կարողանայ լինել արդարեւ պատասխանատու ներկայացուցիչ կառավարութեան, ինչպէս պահանջում է սահմանադրութիւնը։ Չէ՞ որ ոչինչ այնքան չէ բնորոշում այժմեան կարգերը, որքան այն, որ կանցլէր փոխելիս մնացեալ մինիստրները նոյն իսկ ձեւի համար ցանկութիւն ցոյց չը տուեցին յանձնել մինիստրութեան նոր նախագահին իրանց պորտֆէլները։ Ոչ մի ուրիշ սահմանադրական պետութեան մէջ հնարաւոր չէ այդպիսի մի բան, իսկ մեզանում մինիստրները նոր նախագահ են ընդունում, ինչպէս գնդի օֆիցէրները ընդունում են նոր գնդապետի, եթէ հինը լրացնում է ծառայութեան ժամանակը (Աղմկալից հաւանութիւն)։ Ես հաւատացած եմ, որ նրանք կաշխատեն հաշտ ապրել եւ նոր իշխանաւորի հետ,—չէ՞ որ մեզանում ամենքն էլ բարեհոգի մարդիկ են, եւ միայն չարախօս քննադատներն են պարլամենտում, որ խանգարում են հասարակական հանգիստն ու ներդաշնակութիւնը։ Ամենամերձակայ նշանակութիւնն ունի ամենքին հետաքրքրող այն հարցը, թէ ինչ դիրք կը բռնէ նոր կանցլէրի վերաբերմամբ ֆինանսների մինիստրը։ Հօհէնլօէի ժամանակ Միքէլը Պրուսիայում մինիստրների կաբինէտի իսկական գլուխն էր. Բիւլովի ժամանակ այդ կը դժուարանայ. բայց աշխարհիս բոլոր պետական մարդկանց մէջ չը կայ, կարծեմ, մէկը, որ այն աստիճան կարողանար յարմարվել փոփոխվող պայմաններին, որքան Միքէլը (ծիծաղ). Նրա հետ այդ կողմից կարող է մրցել թերեւս միմիայն Լի-Խունգ-Չանգ (Բուռն ծիծաղ), որը կարողացաւ ամեն տեսակ հանգամանքներում իր գլուխը պահել ուսերի վրա։

Ապա անցնելով արտաքին քաղաքականութեանը, Րիխտէր ասաց, թէ «ոչ մի եւրոպական պետութիւն այնքան չէ նպաստել Չինաստանի պատերազմական պատրաստութեանը, որքան Գերմանիան։ Կիաօ-Չաօի գրաւումից յետոյ, որ կատարվեց օպէրէտային փայլով, ասիացիները շատ լաւ հասկացան, որ իրանք չեն, որ սպառնում են Եւրոպայի վրա արշաւանք գործել, այլ եւրոպացիները սկսում են բաժանել իրանց մէջ իրանց երկիրը։ Ես կրկին օրինակ կը բերեմ Բիսմարկին (Ծիծաղ), որի արտաքին քաղաքականութեան մէջ ինձ միշտ դուր էր գալիս բոլոր թատրոնական տեսարանների բացակայութիւնը, իրական պայմանների հասկացողութիւնը։ Երբ նախկին կանցլէրը լսեց Ֆրիդրիխսրուէում, թէ գերմանացիները գրաւել են Կիաօ-Չաօ, նա սուր կերպով նկատեց. «Փոքրիկ հողի կտոր է, բայց բաւական մեծ է՝ այնտեղ մեծ յիմարութիւններ անելու համար»։ Ահա դրանք յիրաւի մարգարէական խօսքեր էին։ Մենք այժմ,—շարունակում է Րիխտէր— յիրաւի, այլ եւս պատերազմ չենք վարում վրէժից, չենք կամենում իւրաքանչիւր սպանված գերմանացու համար այրել գոնէ մի չինական քաղաք եւ մինչեւ անգամ այնքան ներողամիտ ենք, որ քաղաքավարութեամբ հրաւիրում ենք բողդիխանին շնորհ բերել Պէկին, ուր Վալդէրզէէից նա կընդունվէ իրան վայել ամբողջ յարգանքով. բայց ինչո՞ւ պէտք է մենք առաջ անցնէինք եւ պրէստիժի ձգտէինք։ Վալդէրզէէ կարող է փառք տալ Աստծուն, որ Չինաստան գալուց յետոյ նա այլ եւս հարկաւորութիւն չունէր հրամանատարութիւն անելու, այլ պէտք է միայն զօրահանդէսներ կատարէ. մէկ մտածեցէք, թէ ինչ բարդութիւններ, ինչ պատասխանատուութիւն էր սպառնում մեզ այդ գերմանական գերագոյն—հրամանատարութիւնից։ Մեր արտաքին քաղաքականութեան մէջ ամենավտանգաւորն այն է, որ գործող անձինք հարբում են գոռ խօսքերից, եւ նոյն իսկ այն դէպքերում, երբ մենք ժամանակին յետ ենք քաշվում, Եւրոպան այնու ամենայնիւ անվստահութեամբ է վերաբերվում Գերմանիային, տեսնելով նրա պաշտօնական դիւանագիտութեան կուլիսների ետեւում մի ուրիշ դիւանագիտութիւն, որ իր դրօշակի վրա գրել է՝ համաշխարհային քաղաքականութիւն, համաշխարհային տիրապետութիւն, համաշխարհային կայսրութիւն։ Երէկվանից չէ, որ Գերմանիան դեր է խաղում աշխարհում, եւ նրա ազգային շահերը սերտ կերպով հիւսվել են միջազգայինների հետ, բայց երբ մենք արդարեւ դիրք էինք ձեռք բերում, աշխարհը չէր լսում ճոռնշան ֆրազներ։ Իսկ ո՞վ ստեղծեց փոխադարձ շահերի այն ցանցը, որի մէջ ազգային վաստակները միանում են դէպի մնացեալ մարդկութիւնն ունեցած տնտեսական եւ քաղաքակրթական յարաբերութիւնների հետ։ Նրանց ստեղծողը թնդանօթները չէին, զրահակիրները չէին, թթու ազգասէրները չէին (Որոտալից ծափահարութիւններ),—դա գերմանական աշխատանքի, խելքի, տոկունութեան եւ շնորհքի գործն է։ Իսկ ինչ են անում մեր համաշխարհային քաղաքականութեան յափշտակված սիրահարները։ Այդպիսի ճիգերով ստեղծված յարաբերութիւնները նրանք պատրաստվում են խզել ի սէր պրուսական կալուածատէրերի, չը հասկանալով, թէ որ աստիճան անտրամաբան, անհեթեթ բան է ձգտել համաշխարհային դերի եւ մի եւ նոյն ժամանակ չինական պատ քաշել առեւտրի մէջ։ Փոխանակ մարինիզմի, փոխանակ ծովակալամոլութեան, տուէք մեզ խելացի առեւտրական դաշնագիրներ ու մի խախտէք եղածները, եւ դուք անհամեմատ աւելի կը նպաստէք Գերմանիայի համաշխարհային նշանակութեան զօրանալուն, քան բոլոր «սպառազէն բռունցքներով» եւ դրա նման վարմունքներով, որոնց նպատակը, եւ անիրագործելի եւ մնասաբեր, այն է, որ աշխարհիս երեսին ոչ մի բան չը կատարվի առանց Գերմանիայի եւ առանց գերմանական կայսրի։

Համաշխարհային տիրապետութիւն, համաշխարհային քաղաքականութիւն։ Ո՞վ գիտէ, թէ ուր են տանելու մեզ այդ երեւակայածին ձգտումները։ Ասում են, գերմանացիները գիտեն պատմութիւնը եւ ուշք են դարձնում նրա խրատներին, բայց տեսէք, թէ ինչպէս տարբեր են հասկանում մարդիկ պատմական, ըստ երեւոյթին, ամենապարզ փաստերը։

Այնուհետեւ, օրինակ բերելով հռոմայեցիների հզօրութիւնը եւ անկումը, ճառախօսը շարունակում է.

Կարելի՞ է արդեօք այդպիսի բան ցանկալ Գերմանիային։ Տէր մի արասցէ։ Բայց այդ նոյն իսկ անկարելի է, այդ անկարելի էր նոյն իսկ այնպիսի անկասկածելի պատերազմական հանճարի համար, ինչպիսին էր Նապոլէօն։ Անգլիայի եւ Միացեալ-Նահանգների իմպէրիալիզմը կարող էր սարսափեցնող օրինակ ծառայել գերմանացիների համար,—ինչքան թանգ նստեցին Ֆիլիպպինները ամերիկացիներին եւ Տրանսվաալը անգլիացիներին։ Մնանք ուրեմն այն դերում, որ ընտրեցինք մեզ համար Գերմանիայի միացման միջոցին,—ոչ ոքի համար աշխարհումս չը լինել սպառնալիք։ Դրա հակառակ քաղաքականութիւնը առաջնորդում է արեան ծովով եւ իրագործելի կարող է լինել միայն քաղաքակրթութեան աւերակների վրա։ (Բուռն հաւանութիւն)։

Այդ թթու ազգասիրութիւնը, որ արհեստական կերպով է պատուաստված գերմանացիներին,—վերջացնում է Րիխտէր,—ձեռք ձեռքի տուած է գնում հասարակական առողջ դատողութեան անկման եւ ստրկահոգութեան հետ... Դուք նորերս լսեցիք կոչ՝ ուղղված ազգային ինքնասիրութեան, ցանկութիւն, որ գերմանացին, հին հռոմայեցու պէս, սեփական արժանապատուութեան գիտակցութեամբ արտասանէր՝ ես գերմանացի եմ։ Մենք էլ ի բոլոր սրտէ ցանկանում ենք նոյնը, բայց թող այդ կատարվի ոչ արտասահմանում՝ գերմանական զրահակիրների հովանաւորութեան տակ եւ ոչ իբր գոռոզ մարտակոչ՝ ուղղված դէպի այն ամենը, որ օտար է,—այլ թող ներսում ամեն մէկը մեզանից կարող լինի այն հպարտ գիտակցութիւնն ունենալ, թէ ինքը պատկանում է մի մեծ երկրի, ուր սահմանադրութիւնը ամենքին ժամանակցութեան իրաւունք է տալիս օրէնսդրութեան մէջ, ուր օրէնքները չեն ծառայում մի փոքրիկ արտօնեալ դասի շահերին, ուր կարծիքների ազատ արտայայտութիւնը եւ խղճի ազատութիւնը դատարկ խօսքեր չեն եւ որտեղ, վերջապէս, ամենքի հաւասարութիւնը օրէնքի առաջ, առանց դասակարգի, դաւանութեան եւ հարստութեան խտրութեան, թափանցել է բոլոր հիմնարկութիւնների մէջ եւ բոլոր մարդկանց ուղուծուծի մէջ։ Այո, այն ժամանակ հպարտ—հպարտ ասացէք,—մենք գերմանացիներ ենք»։ (Որոտալից ծափահարութիւններ։ Ամենքը կանգնում են տեղներից։ Միահամուռ աղաղակներ՝ «Կեցցէ Րիխտէր»)։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Թիւրքիայում մօտ ժամանակներս պէտք է տեղի ունենայ ընդհանուր ժողովրդագրութիւն, որից յետոյ բոլոր թիւրքահպատակներին կը տրվեն նոր անցագրեր՝ տպագրված սուլթանական տպարանում։ Անցագրերը կը տպագրվեն 25,000,000 քանակութեամբ։ «Ի նկատի ունենալով պետութեան կարիքները—ասում է «Իգդամ» լրագիրը—անցագրերի համար կը նշանակվի կրկնակի գին եւ անցագրական այդ տուրքից գոյացած 50,000,000 պիաստրը կը գործադրվի նոր բերդեր կառուցանելու եւ նրանց Կրուպպի թնդանօթներով սպառազինելու համար»։—Սուլթանը նորերս Կ. Պօլսի աւստրո-ունգարական դեսպան բարօն Կալիցէին շնորհեց Իֆթիխատի շքանշանը։ Այս առիթով թիւրքական լրագիրները գովաբանական յօդուածներ նուիրեցին բարօն Կալիցէի հասցէին։ Այդ լրագիրներին չը ձայնակցեց միայն թիւրքական մի լրագիր, որ ներշնչումներ չէ ստանում Իլդիզ-Քիօսկից։ «Հետաքրքրական է իմանալ—ասում է այդ լրագիրը—ինչ պատճառով մամուլը յայտնում է իր հրճուանքն ու խնդակցութիւնը բարօն Կալիցէին։ Այն չէ՞ արդեօք պատճառը, որ բարօնը ամբողջ 20 տարի կարողանում էր հաւատացնել սուլթանին, թէ Աւստրո-Ունգարիայի միապետը նրա ամենալաւ բարեկամն է։ Անշուշտ շատ լաւ բարեկամ է, քանի որ հէնց այդ միապետը առանց մի կաթիլ արիւնի միացրեց իր երկրներին երկու ամենահարուստ նահանգներ եւրոպական Թիւրքիայից, եւ դրա համար բացի շնորհակալութիւնից, բացի խոնարհ ողջոյններից՝ ուրիշ ոչ մի վատ բան չը տեսաւ Թիւրքիայից։»

—Թիւրքական եւ պարսկական կառավարութիւնների մէջ համաձայնութիւն է կայացել մի մշտական յանձնաժողով կազմելու թիւրք-պարսկական սահմանագծի մի տեղում։ Յանձնաժողովի գործը պէտք է լինի հսկել քիւրդ աւազակների վրա եւ բաւարարութիւն տալ թիւրքական եւ պարսկական հպատակների պահանջներին այն դէպքերում, երբ նրանց անասուններն եւ այլ գոյքը կենթարկվեն աւարի աւազակների կողմից։

—«Րէյտէրի գործակալութեանը» հաղորդում են Վաշինգտօնից, թէ ներկայումս Միացեալ-Նահանգների պետական գանձարանում գտնվում է 451,477,404 դոլլար ոսկի։ Այդքան մեծ գումար երբէք չէ եղել դեռ եւս Միացեալ-Նահանգների գանձարանում սկսած այն օրից, երբ այդ պետութիւնը գոյութիւն է ստացել։ Ասում են, թէ ոչ մի պետութիւն իր գանձարանում այդքան գումար չունի այժմ։

—Հետաքրքրական հատուածներ են առաջ բերում գերմանական լրագիրները այն նամակներից, որ գերմանացի զինուորները գրում են Չինաստանից իրանց ծանօթներին եւ բարեկամներին։ Այսպէս մի նամակում ասված է. «Մենք այնպէս ենք ջարդում չինացիներին, որ իրանք իրանց ամբողջ կեանքում չեն մոռանայ գերմանացի զինուորներին։ Վաղ առաւօտից սկսած մենք տակն ու վրա ենք անում գիւղերը՝ զէնքեր որոնելու համար։ Վայ այն չինացիներին, որոնք կընկնեն մեր ձեռքը. ոչ միայն նրանց քիթ ու բերանը կը տրորվի, այլ եւ առանց մտրակի 50 հարուած ուտելու, նրանք չեն ազատվի մեր ձեռքից։ Դրանից յետոյ մենք «ամէն» ասելու ժամանակ չենք տալիս ու հէնց իրանց սրերով կտրում ենք նրանց հիւսերը»։ Տեանձինից մի զինուոր գրում է. «Այստեղ ամեն ինչ աւերված ու կործանված է. գիւղերը այրված են եւ լիքն են թափառող շներով։ Այն հազուագիւտ չինացիները, որոնց դեռ չեն մորթել, հարկադրվում են աշխատելու եւ հակառակութեան դէպքում ենթարկվում են բամբուկի հարուածների։ Երկու օր առաջ մենք աշխատեցնում էինք գերիներին մինչեւ այն րոպէն, երբ նրանք հրացանի բռնվեցին։ Մի շաբաթվայ մէջ հրացանազարկ արինք 60 մարդու։ Չինացիներն էլ իրանց կողմից սպանել են շատ եապօնացիների։ Պէյխօ գետը լիքն է դիակներով։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ժողոված տեղեկութիւնների համեմատ, կանանց միջնակարգ կրթութեան դրութիւնը Ռուսաստանում հետեւեալ պատկերն է ներկայացնում.

«Կանանց միջնակարգ կրթութիւն տրվում է 476 դպրոցներում (32 փակ ինստիտուտներ, 30 մարիինսկայա գիմնազիաներ, 69 թեմական դպրոցներ եւ ժողովրդական լուսաւորութեան վարչութեան տակ գտնվող 346 գիմնազիաներ եւ պրոգիմնազիաներ)։ 1875 թւից հիմնվեցին 55 տոկոս այժմ գոյութիւն ունեցող մինիստրական իգական դպրոցների։ Բոլոր իգական դպրոցների 17 պրօցէնտը պահում են մասնաւոր անձինք կամ տարաղաւան ծխական հիմնարկութիւններ, բայց ունեն կառավարչական գիմնազիաների բոլոր իրաւունքները։ 172 իգական գիմնազիաներում, համաձայն 1870 թւի օրէնքի, հիմնված է ութերորդ լրացուցիչ դասարան։ Աշակերտուհիների թիւը բոլոր իգական միջնակարգ դպրոցներում 129,462 է. 1878 թւին բոլոր այդպիսի դպրոցների աշակերտուհիների թիւը 49,278-ից աւել չէր։ Իգական գիմնազիաների եւ պրոգիմնազիաների պահպանութեան համար արած ծախսերի գումարը անցեալ տարի հասնում էր 7,138,047 րուբլու, բայց պետական գանձարանն այդ բանի վրա ծախսում էր միայն 600,000 ր., այսինքն 8,4 տոկոս։

⁂

Գիտէք օրվան ամենահրատապ խնդիրը ինչ է, չինական պատերազմը, Թրանսվալի խնդիրը, ցուցահանդէսը, Հոլանդայի թագուհւոյն ամուսնութեան խնդիրը, Տէշանէլ՝ ֆրանսական սենեկի նախագահին ամուսնութեան խնդիրը... ո՛չ, ո՛չ, բոլոր այս խնդիրները երկրորդական են դարձեր եւ կամ միայն քաղաքականութեամբ զբաղող թերթերը միայն կը հետաքրքրեն։ Այս օրուան ամենաառաջ խնդիրը Բարիզ քաղաքը ընդլայնելու խնդիրն է, որով ամենքը կը զբաղին երկու օրէ ի վեր։ Բոլոր թերթերը երկար բարակ յօդուածներ կը յատկացնեն այդ նորութեան։ Ֆրանսական կառավարութիւնը ի նկատի ունենալով Բարիզի ժողովրդեան օր ըստ օրէ բազմանալը, ծրագիր մը պատրաստեր է Բարիզի սահմանները՝ գոնէ մէկ կողմէն ընդլայնելու։

Շատ անգամ կրկնված է եւ աշխարհագրութեան բոլոր դասագրքերը կը յայտարարեն թէ աշխարհիս ամենամեծ քաղաքներն են՝ Լօնդօն եւ Բարիզ՝ Անգղիոյ եւ Ֆրանսիայի մայրաքաղաքները։ Այդ երկու քաղաքները, կլոր թուով, առաջինին 4 միլիօն եւ երկրորդին 3 միլիօն բնակիչ կուտան։ Արդ այս ենթադրութիւն սխալ է, վասն զի կարելի է ըսել թէ Բարիզ Լօնդօնի չափ—եթէ ոչ անկէ աւելի—բազմամարդ է։ Եւ ահա ինչպէս։ Բարիզ քաղաքը իր բոլորտիքը պարիսպ մը կամ պատ մը ունի, որն իրեն իբր սահման կը ծառայէ. այդ պատին մէջ ներփակված ժողովուրդն է, որ 3 միլիօնէն մի քիչ աւելի կը հաշուի այսօր, իսկ պարիսպներէն դուրս գտնվող տեղերը, որ հաշուէն դուրս են եւ զանազան մեծ ու փոքր քաղաքներ կը կազմեն, թէպէտ Բարիզէն կախում ունին։ Եթէ այդ՝ Բարիզի հետ համեմատելով՝ փոքր քաղաքներն ալ հաշուենք (ինչպէս Մօն Ռուժ, Ռէօյլի, Իսի, Վանվ, Մալաքօֆ, Բուլօյն, Շաթիյօն եւ այլն եւ այլն) Բարիզի ժողովուրդը 6—7 միլիօնի ալ կըրնար բարձրանալ, բայց այդ արուարձանները հաշուի մէջ չեն, մինչդեռ Լօնդօն պարիսպ չունենալով իր բոլորտիքը, իր արուարձաններն ալ հաշուելով է, որ 4 միլիօն բնակիչ ունի։

Բայց մեծութեան կամ փոքրութեան ունայն փառքին համար չէ, որ ֆրանսական կառավարութիւնը կը փափագի Բարիզը մեծցնել, այլ ժողովուրդի բարօրութիւնը աչքի առաջ ունենալով կուզէ աւելի ընդլայնել արդի Բարիզը։ Ուրեմն կառավարութիւնը ծրագիր մը պատրաստեր է ըստ որում Նէօյի եւ Բուլօյն արուարձանները քիչ ատենէն Բարիզի մաս պիտի նկատուին. այսինքն այդ երկու արուարձաններու կողմէն Բարիզի պատերը պիտի քանդուին եւ մաքսատուները այդ փոքր քաղաքներու ծայրերը պիտի մղուին։

Նէօյին Բուա դը Բուլօյն կոչված արուեստական գեղեցիկ անտառին կողքին կը գտնվի, շատ օդաւէտ եւ գեղեցիկ քաղաք մ'է. այնտեղ կը բնակին ֆրանսացի եւ օտար ազնուականները։ Նոյնը կարելի է ըսել նաեւ Բուլօյնի համար, թէպէտ նա Բարիզէն մի քիչ աւելի հեռի է։ Այս երկու տեղերու բնակիչները, անհոգ, խաղաղ եւ երջանիկ կեանք մը կանցնեն, ուստի չէին փափագեր, որ իրենց խաղաղութիւնը վրդովեն Բարիզի շարժումն ու իրարանցումը մինչեւ իրենց բնակարաններուն եւ պալատներուն մօտենալով։ Այս կերպով խօսեր եւ յայտարարութիւններ ըրեր են այդ երկու տեղերու քաղաքագլուխները, բնականաբար իրենց վարչութեան տակ գտնուող ժողովրդոց բերնէ խօսելով, սակայն ինչ ընենք, որ կառավարութիւնը այդպիսի ծրագիր մը պատրաստեր է արդէն եւ գուցէ չուտով կիրականանայ»։

Այսպիսով Բարիզի զարդարանքներէն մին՝ Բուլօյնեան անտառը իր գեղեցկութիւնը պիտի կորսնցնէ, այս դժբաղդութեան վրա շատ թերթեր ջերմաջերմ արցունքներ կը թափեն։

(«Paris—Nouvelles»)

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 հոկտեմբերի

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Ռուսաց ընկերութեան «Святой Николай» պօստատար շոգենաւը, որ դուրս էր եկել Օդեսայից դէպի Սեվաստոպօլ, Եւպատորիայի մօտ խրվեց ծանծաղուտի մէջ։ Այստեղից օգնութեան է ուղարկված Ռուսաց ընկերութեան «Րիւրիկ» շոգենաւը։

ԵԱԼՏԱ։ Երէկ Եալտա հասաւ Նորին մեծութեան սուլթանի արտակարգ դեսպանութիւնը, որին գլուխ է կանգնած Թուրխան-փաշան։

ՇԱՆԳՀԱՅ։ Կայսերական հրամանագրով բոլոր նահանգներում նշանակված են ատեանաւորներ՝ քննութիւններ կատարելու համար։ Յետագայ շաբաթվանից սկսած՝ նրանք պէտք է քննութիւններ կատարեն. նշանակված բոլոր անձինք համարեա պահպանողական կուսակցութեան են պատկանում։ Պնդում են, թէ կայսրը շատ կը ցանկանար վերադառնալ Պեկին։ Ասում են, թէ նա փորձ կը փորձէ միջոցներ գտնելու, որպէս զի վերադառնայ Պեկին գոնէ միայնակ, եթէ որ այրի կայսրուհին յամառի եւ չը կամենայ ուղեկցել նրան։ Լի-Խունգ-Ջանգ հարցումն արեց բոլոր փոխարքաներին եւ նահանգապետներին, թէ համաձայն են արդեօք նրանք ժամանակից լինելու այն մեծ գումարների երաշխաւորութեան, որ պահանջում են պետութիւնները իբրեւ վարձատրութիւն կրած վնասների համար։

Լի-Խունգ-Ջանգ չարունակում է միջոցներ ձեռք առնել ճնշելու «Մեծ-բռունցքը» եւ վերակազմելու Պեչիլիի նահանգի զօրքը։

ՊԵԿԻՆ։ Սինանֆուից ստացված բոլոր տեղեկութիւնները հաստատում են այն ենթադրութիւնը, թէ կայսրը չի վերադառնայ Պեկին, քանի որ քաղաքը գրաւված կը լինի դաշնակից զօրքերից։

Ընդհանուր գոհութիւն է նկատվում Պաօտինֆուի փոխ-նահանգապետին եւ չորս ուրիշ բարձրաստիճան ատեանաւորներին մահվան պատժի դատապարտելու առիթով։

Քննութիւնից երեւաց, որ մի ամերիկացի տիկին, սպանվելուց առաջ, խայտառակ կերպով այլանդակված էր։ Չինական երկու տաճարների աւերումը բաւականաչափ պատիժ չէ կարող համարվել այսպիսի ամօթալի գործի համար։

ՇԱՆԳՀԱՅ։ Լիւկանիին եւ Ջժանչժիդունին խաղաղութեան բանակցութիւններ վարելու լիազօրներ նշանակելու հետ միասին՝ նրանց հրամայված է մնալ իրանց բնակութեան այժմեան տեղերում եւ միւս լիազօրների հետ յարաբերութիւն պահպանել նամակներով եւ հեռագիրներով։

Կայսերական հրամանով Լուզվանչին նշանակված է ցենզուրայի եւ դաւանութիւնների մինիստրութեան նախագահ. Նրա ազդեցութիւնը չարունակ աւելանում է, եւ այս հանգամանքը ցոյց է տալիս, որ օտարերկրացիներին հակառակ յետադիմական ձգտումները գերակշռութիւն են ստանում։

Իւէտոչան, որ նշանակված է Խուբէի նահանգապետ, պաշտօնի մտնելուց առաջ մի ամսվայ արձակուրդ խնդրեց հիւանդութեան առիթով. ըստ երեւոյթին, դրա պատճառը օտարերկրացիների անբարեհաճ կարծիքներն են նրան պաշտօնի կանչելու մասին։

ՊԵԿԻՆ։ Դիպլօմատիական մարմինը վերջացրեց այսօր Ֆրանսիական առաջարկութեան վեց յօդուածների մանրամասն քննութիւնը. այդ առաջարկութիւնները հաւանութիւն գտան եւ խմբագրվեցին մի քանի փոփոխութիւններով։ Նրանց նշանակութիւնը աւելի ընդլայնելու համար՝ դիպլօմատիական մարմինը մտադիր է աւելացնել երկու որոշում. առաջինով կը պահանջվի չինական կառավարութիւնից, որ նա պարտաւորվի հրատարակել եւ երկու տարվայ ընթացքում կպցնել պատերին կայսերական հրաման, որ մահվան պատժի սպառնալիքով արգելէ ժամանակցել «Մեծ-բռունցքին», երկրորդով կը պահանջվի, որ չինական կառավարութիւնը պարտաւորվի յայտնել փոխարքաներին եւ նահանգապետներին, որ այսուհետեւ նրանք պատասխանատու են կարգ ու կանոնի եւ օտարերկրացիների ապահովութեան համար։

ԲՐԷՄԷՆ։ Բակտերիօլօգիական հետախուզութեամբ ապացուցված է, որ այստեղ ժանտախտից հիւանդանալու մի դէպք է տեղի ունեցել։ Նախազգուշութեան բոլոր միջոցները ձեռք են առնված։

ՊԱՐԻԶ։ Լուբէ վերադարձաւ առանց որ եւ է միջնադէպքի հանդիպելու։

ՄՕՍԿՎԱ։ Պաւելեցի ճանապարհին, 261-րորդ վերստի վրա, գնացքը երկու մասի բաժանվեց. կտրված 15 վագօնները հասան գնացքի միւս մասին։ Եօթ վագօններ փշրված են. երկու կօնդուկտօրներ ծանր վէրքեր ստացան։

ՄԱԴՐԻԴ։ Երէկվայ ձերբակալված անձերի մէջ կան շատ քահանաներ եւ մի քանի բողոքական եպիսկոպոսներ։ Կարլիստական լրագիրները դադարեցրած են։ Կարլիստական եւ մի քանի կաթօլիկ կլուբներ փակված են։

24 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետերբուրգում Ա. Ա. Ֆիլիպպօվին թոյլ է տրված հրատարակել տպագրական գործի մի պատկերազարդ ժուռնալ «Наборщикъ» անունով։ Առաջին համարը դուրս կը գայ նոյեմբերին։

ԲՐԷՄԷՆ։ Ժանտախտից հիւանդացած ծովային պաշտօնեայ Կունցէ մեռաւ առաւօտեան։ Հսկողութեան տակ գտնվող բոլոր անձինք մինչեւ այժմ առողջ են։

ՊԵԿԻՆ։ Այն լուրը, թէ իտալական շրջախումբը անյայտացել է Պաօտինֆուից վերադառնալիս, ճիշդ չէ։ Նրան, ընդհակառակը, հասան անգլիական հեծեալները, առանց վտանգի հանդիպելու եւ երկու զօրախմբերը իրար հետ միացած գնացին Պեկին։

ՉԵՐՆԻԳՕՎ։ Ներքին գործերի մինիստրը իր ամուսնու հետ, առաւօտեան այստեղ հասնելուց յետոյ, այցելեց նահանգապետին։ Ժամի երկուսին մինիստրը Խարկօվի վրայով ուղեւորվեց դէպի Եալտա։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԲԻԲԻ-ԷՅԲԱԹ, Ս. Ք. Փոխանակ երկար դատողութիւնների շատ լաւ կանէիք, եթէ ձեր թղթակցութեան մէջ հաղորդէիք փաստերը պարզ ու որոշ։ Չենք կարող տպագրել։

ԹԱՒՐԻԶ, Մ. Յ. Մենք փակել ենք այդ հարցը և նորից բանակռիւ բաց անել չենք կարող։

Մեզ թղթակցութիւն, յօդուածներ ուղարկողներին պարտք ենք համարում նորից յիշեցնել, որ իւրաքանչիւր գրութեան տակ պէտք է լինի գրողի իսկական անունն ու հասցէն։ Այդ տեղեկութիւնները հարկաւոր են միմիայն խմբագրութեան գիտութեան համար. մենք միանգամայն առանց ուշադրութեան ենք թողնում անստորագիր, կամ կեղծ անուններով ստորագրած գրուածքները։ Գրողի կամքից է կախված երեւալ «Մշակի» մէջ իսկական ստորագրութեամբ կամ կեղծ անունով, բայց խմբագրութիւնը պիտի իմանայ թէ ում հետ գործ ունի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը Պետերբուրգի հաշւով)
տարբերութիւնը 58 րոպէ։

	№ 5 գնացքը:	№ 3 գնացքը
Բագուից դուրս է գալիս	ցեր. 3 ժ. 5 ր.	գիշ. 11 ժ. 15 ր.
Թիֆլիս է հասնում	առ. 8 » 23 »	եր. 5 » 35 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 9 » 3 »	եր. 6 » 30 »
Բաթում է հասնում	եր. 9 » 11 »	առ. 7 » 10 »

	№ 6 գնացքը:	№ 4 գնացքը.
Բաթումից դուրս է գալիս	առ. 8 ժ. 56 ր.	եր. 10 ժ. 47 ր.
Թիֆլիս է հասնում	եր. 8 » 42 »	առ. 11 » 18 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 9 » 22 »	» 12 » 36 »
Բագու է հասնում	ցեր. 1 » 25 «	» 7 » — »

արագ գնացք

Շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը.

Թիֆլիսից դուրս է գալիս	առաւ.	7 ժ.	56 ր.
Բագու է հասնում	երեկ.	9 »	— »
Բագուից դուրս է գալիս	առաւ.	6 »	50 »
Թիֆլիս է հասնում	երեկ.	8 »	12 »

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս.	երեկ.	10 ժ.	—
Ալէքսանդրապօլ հասնում է	առ.	8 »	27 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 »	23 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	4 »	12 «
Ալէքսանդրապօլ հասնում է . . .	երեկ.	7 »	40 »
Թիֆլիս հասնում է	առ.	6 »	15 »

Լոյս տեսաւ Մոսկվայում
ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ
◆ ՀԻՆ ՑԱՒ ◆
(Հրապարակախօսական խոհեր)
ԳԻՆԸ 30 Կ.
Վաճառվում է Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում, «Մշակի» խմբագրատանը եւ Հրատարակչական ընկերութեան գրասենեակում։ 10—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ի. Ֆ. Պրօստեվիչ—12—1 ժ. ականջի, քթի, կոկորդի եւ կրծքի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ի. Ֆ. Պրօստեվիչ—5—6 ժ.
Ա. Ն. Ծպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վեներ. և մորթու հ.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Սավանիեակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԲԺԻՇԿ
ՏԻԳՐԱՆ ԹԱԴԷՈՍԵԱՆ
Ընդունում է առաւօտեան 11—12 ժ. եւ երեկոյեան 5—6 ժ.
Մասնագիտութիւն՝ ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ։
Шелковниковская (Большая Кривая), д. Шаумова, № 18. 14—20

Շուտով լոյս կը տեսնի
ՄԱԿԱՐ ՉՄՇԿԵԱՆԻ
«ԾՈՑԻ», «ՊԱՏԻ», «ՍԵՂԱՆԻ» եւ „АРМЯНСКІЙ КАЛЕНДАРЬ"
1901 թ. ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
Ցանկացողները թող վաղօրօք յայտնեն, որպէս զի ժամանակին կարողանան ստանալ։
(ե. չ.) 10—15

Հարկաւոր է մի ուսուցիչ Էնզէլիի հայոց երկսեռ դպրոցի համար։ Պայմանների մասին տեղեկանալ «Մշակի» խմբագրատանը։ 5—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտնում է, որ նրա դիւանատան մէջ 1900 թւի հոկտեմբերի 28-ին, ցերեկվայ ժամի 12-ին նշանակված է աճուրդ՝ կապալով տալու Անաստասիեվսկայա (Նօվօ-Կօրգանօվսկայա) փողոցը ամբողջապէս քարայատակելու գործը. 229 պագ. սաժէն երկարութեամբ եւ 1432 ր. 40 կ. գումարի։ Անաստասիեվսկայա փողոցը գտնվում է Թիֆլիսի I քաղաքամասում։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան չինարարական բաժանմունքում բոլոր լի օրերը՝ ժամի 9-ից մինչեւ 3-ը։ 2—3

Ընկերութիւն
ԲՐՕԿԱՐ եւ Ընկ.
յանձնարարում է
անուշահոտ
„ՋՐԱՅԻՆ ՇՈՒՇԱՆ"
Զօրեղ եւ հաճելի բուրմունք
ՇԱՊԿԱՑ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆ
ՕԾԱՆԵԼԻՔ
ՍԱՊՈՆ
ՊՈՒԴՐԱ
№ 104055 (25) 3—10

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆ
ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ
ԳԻՆՆ Է 1 Ր.
Թիֆլիսում դիմել—Կենտրոնական եւ Զաք. Գրիգորեանցի գրավաճառանոցներին, նոյնպէս եւ Աղէքսանդր Ստեփանեանցին (Զուբալօվի քարվանսարայում)։ (ե. հ. չ.) 10—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով պատիւ ունի յայտնելու ի տեղեկութիւն հասարակութեան, որ նա հոկտեմբերի 28-ին, ժամի 1-ին, աճուրդ է նշանակել՝ կապալով տալու Ալէքսանդրեան այգու մօտ գտնվող խանութները։
Պայմանագրերը կարելի է տեսնել վարչութեան չորրորդ բաժանմունքում, առաւօտեան 9 ժամից մինչեւ 3-ը։ 3—3

Լոյս տեսաւ
ԿԱՄԻԼԼ ՖԼԱՄՄԱՐԻՕՆԻ
ՈՒՐԱՆԻԱ
աստղագիտական վէպը
Թարգմ. ֆրանս. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ։
Գիրքը տպված է լաւ եւ չքեղ թղթի վրա, 376 երես, միջակ դիրքով եւ արժէ 1 ր. 50 կ.
Դիմել՝ Тифлисъ, Г. Галустянцу, Лорис-Меликовская, № 11. 10—10

Մի հայուհի, որ գիտէ ռուսերէն, ֆրանսերէն եւ մուզիկա, ցանկանում է պարապել 7—8 տարեկան աղջկայ հետ կամ յանձն առնել կամպանիօնկայի պաշտօն. համաձայն է Թիֆլիսից դուրս գնալ. պայմանները՝ ամսական 30 րուբլի, ամեն բան պատրաստ։ Հասցէն՝ Վրաց ազնուականների քարվանսարա (Նախ. Արծրունի) Սամադօվայի գրասենեակ։ 3—3

Ստացված է եւ վաճառվում է
„ՇԻՐԱԿ"
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ, ՊԱՏԻ եւ ԾՈՑԻ
Կ. ԱՓԻՆԵԱՆԻ
Դիմել Վօրօնցօվի արձանի դիմաց, Տէր-Սարգսեանի խանութը։
(ե. հ. չ.) 3—3

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ
ՌՕՅԵԱԼՆԵՐ
ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ
ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԳԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԽԱՁԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ։
Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։
ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի։
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՁԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ
ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան
Музыкалное депо Б. М. Мириманіана,
ТИФЛИСЪ.
Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
19—20

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
ШОКОЛАДЪ СІУ
ФАБР. С. СІУ и Кº МОСКВА.
18—52 М. 9,730 (2)

Дозволено цензурою, Тифлисъ. 24 Октября 1900 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.